ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 6

ՏԱՐԵԿԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆԷ

Թաւրիզում . . . . . 14 ղրան

Գաւառներում . . . . 20 ղրան

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ռուսաստան . . . . . 4 ր. 50 կ.

Թուրքիա . . . . . 50 ղրուշ

Եւրոպա . . . . . 12 ֆրանգ

Ամերիկա . . . . . 2 տ. 50 ս.

Յայտարարութիւնների վճարը

Առաջին երեսում տողատեղը 10 շահի

Զորրորդ ,, ,, 5 ,,

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 6 շահի

Խմբագրութեան՝ հասցէն՝ Թաւրիզ

ՄԻՏՔ-խմբագրութիւն կամ Tauris(Perse)

Rédaction du Journal 'Armen. «MITK»

ՄԻՏՔ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԳՐԱԿԱՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԲԱՂԱՄԱԿԱՆ

ادارهٔ روزنامهٔ مطك تبریز

مدیر کل و صاحب امتیاز آلکساندر در وارطانیانس

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Մեկ գրողներից խնդրւում է գրեն պարզ, մաքուր և անպայման թղթի առաջին երեսի վրայ:
2. Խմբագրութիւնս իրեն է վերապահում իրաւունք՝ ստացուած յօդուածները փոփոխութեամբ և կրճատումներով հրատարակելու:
3. Մենք մերժում ենք աւտի և ցվոի ուղղագրական հերձուածը և մեզ ենք վերապահում իրաւունք՝ ստացուած նիւթերը տպել մեր ընդունած ուղղագրութեամբ—ու-ով:
4. Չտպուած կարճ յօդուածները չեն վերադարձնւում: Ուղարկուած և չտպուած երկար նիւթերը յետ ստանալու համար պէտք է ուղարկել պօստի ծախսը:
5. Չի տպուի ոչ մի յօդուած եթէ դա կեղծ անուան հետ միաժամանակ չի կրի յօդուածագրի անուն ազգանունը:
6. Բաժանորդները թերթ չստանալու դէպքում չուտով տեղեկացնելու են մեզ՝ հակառակ դէպքում խմբագրութիւնս իրեն զերծ է համարում պատասխանատուութիւնից:
7. Չտպուած յօդուածների համար խմբագրութիւնս բացատրութիւններ չի տալիս:
8. Հասցէները փոխելու համար պէտք է մեզ ուղարկել 2 ղրան 10 շահի:

№ 6 1913 Թ. ՈՒՐԲԱԹ 3 ՄԱՅԻՍ № 6

ՎՏԱՆԳՈՒԱԾ ԱՊԱԳԱՅ

—

Ժամանակներն այնպէս են փոխւում, կեանքն այնքան հսկայական քայլերով է առաջդիմում, որ անհրաժեշտ է կանգ առնենք և հարց տանք մեզ՝ ո՛ւր ենք եւ ի՞նչ բանի մենք հայերս։

Մենք մեր կեանքը, վաճառականութիւնը, կրթական և հասարակական գործերը տանում ենք այնպէս, ինչպէս այդ անում էինք մի երկու տասնեակ տարի առաջ։

Այդ այլ իսօքով նշանակում է, որ մենք կանգ ենք առել, յետադիմում ենք և չենք նկատում մեր յետադիմումը և այլոց՝ յառաջադիմելը։

Եւ, իրօք, նկատենք ինչ էինք մենք երէկ, իսկ ինչ՝ այսօր։

Դեռ այս մօտիկ անցեալում հայերիս ձեռքին էր գտնւում Պարսկաստանի վաճառականութեան առաջնութիւնը։ Պարսկաստանի բերքերի արտահանութիւնը առաւելապէս մեր ձեռքին էր և մենք հայերս էինք վաճառականութեան վարիչներն ու միջնորդները Ռուսաստանում և ռուսական շուկաներում։

Իսկ այսօր մեր վաճառականութիւնը յետ է մղուած։ Մեր կողքին աճել և մեզնից առաջ են անցել թուրք ու պարսիկ վաճառականները։

Մրցութիւնը նրանց հետ, գրեթէ, անհնարին է։ Նրանք խնայող են, սակաւապէտ... և ամեն ինչ հաշուի առնող։ Թուրք կամ պարսիկ առևտրականը որ 100,000 ի ապրանք է արտահանում մինչև Նիժնի, աննշան ճանապարհածախսով էլ հասնում է տեղ։ Երկաթուղիներում և նաւերում նա երրորդ կարգով կամ տախտակամածի վրայ է ճանապարհորդում և մի գեղեցիկ օր էլ մեծ գնով ծախում իւր ապրանքը և գոհ ու հարուստ դառնում հայրենիք։

Դրա փոխարէն հայ վաճառականը շռայլող է, անհաշիւ, նա հազիւ է գիջում երկրորդ կարգերում ճանապարհորդել, ապա այս կամ այն քաղաքում նա անհրաժեշտօրէն իւր տուրքն է տալիս թատրոնի կամ այլ բաւականութեանց։ Սրա վրայ աւելացրէք և այն, որ հայ առևտրականը մի փառաւոր «հօթել» թողած՝ չի կարող թուրք վաճառականի նման գնալ և ծուարել 5—6 հոգով մի մոռացուած սենեակում։

Թուրքը կամ պարսիկը այս շռայլ ծախսերը չունենալով՝ իւր ապրանքն էլ փութին 10—15 կոպ. աժան ծախելով՝ շուտով լիագրպան հեռանում է Նիժնիից, իսկ հայը սրտաղող դեռ օրեր է սպասում իրեն թանգ նստած ապրանքը մի կերպ հալեցնելու։

Թուրք ու Պարսիկներից բացի, մենք պարտաւոր ենք լուրջ հաշուի առնել օրէցօր մեզ մօտ բազմացող ռուս և եւրոպացի վաճառականներին կամ նոցա գանազան ֆիրմաների ներկայացուցիչներին, որոնք մեր վաճառականներից աւելի լաւ են հասկանում շուկայի պահանջը և հալուող ապրանքների տեսակները։

Մենք մեր վաճառականութեան հին ուղին բռնած՝ սրանց հետ ևս մրցել չենք կարող, ինչպէս հնար չկայ մրցելու և թուրքի հետ, որ հայից մեծաքանակ ապրանք գնելով՝ շուկայում նոյն հայից էլ նոյն ապրանքը աւելի պակասով է ծախում և գերազանցօրէն առաջ վարում իւր առևտուրը։

Մի քանի տարի այսպէս շարունակուի՝ մենք հայերս արդէն աւերակների վրայ կնստենք։ Վաղը-միւս օրը կհասնի երկաթուղին և պակաս էլ նա կլրացնի, եթէ մենք մեզ թափ չտանք և չեւրոպականացնենք մեր առևտուրը։

Արդ, վտանգուած է մեր դրութիւնը ներկայումս, իսկ մեր ապագան իսպառ վտանգուած կլինի՝ եթէ չշտապենք դարման տանել։

Մենք պէտք է օրինակ վերցնենք եւրոպացիներից և գործենք ընկերութիւններով, հեռու վանելով կասկածը իրարից և մի կողմ դնելով իրարից ծածուկ «ուտելու» հայկական տգեղ սովորութիւնը։

Եպա հայ վաճառականութեան կացութեան և զարգացման համար անհրաժեշտ է վաճառականական մի սենեակ-chambre de commerce-ուր նոքա քննութեան պէտք է ենթարկեն ներկայի առևտրական հարցը, մտածեն ուժեղացնելու հայ վաճառականութիւնը հրապարակի վրայ եայլն։ Մեր վաճառականները պէտք է գիտնան, որ այս անհրաժեշտ է եւ անյետաձգելի, ապա թէ ոչ՝ մի քանի տարուց յետոյ մենք կլինինք լոկ աշխատող ձեռքեր օր աւուր ներս խուժող եւրոպական կապիտալի և կապիտալիստների համար։

Մենակ առևտուրի մէջ չէ, որ մենք յետադիմել ենք։ Նոյնն է մեր դրութիւնը և արհեստների մէջ։

Մի երկու տասնեակ տարի առաջ որտեղ կգտնէիք թուրք օրինաւոր ոսկերիչ, դերձակ, ժամագործ, կօշկակար և այլն։ Այդ արհեստները ևս այսօր խլուած են հայերից և այդ ասպարէզում ևս թուրքերը մեզնից աւելի առաջ են գնացել։

Մենք ի հարկէ կարող ենք պարծենալ, որ սափրիչութիւնը, հիւսնութիւնը և օղեվաճառութիւնը մեր ձեռքն է մընացել։ Ահա թէ ուր ենք հասել և դեռ վաղը կզգանք թէ որքան թշուառացել ենք կամ որքան թշուառութիւն է սպասում մեզ։

Երէկ մենք պարծենում էինք մեր դպրոցներով, մեր կրթութեամբ և եւրոպական գանազան լեզուներ գիտցողներով, և խիստ բարձրից էինք նայում մեր sqէs և յեsամնաց հարևանների վրայ։ Եւ, իրօք, մենք երէկ բանկերում, փոստում, մաքսատնում և հեռագրատնում[1]) ունէինք շատ հայ և ընդունակ պաշտօնեաներ։

Իսկ այսօր... Այսօր մենք, գրեթէ, վտարուած ենք և այդ տեղերից։ Մեզ փոխարինել են թուրք երիտասարդներ։ Շնորհիւ օտար միսիօնների դպրոցների, շնորհիւ արթնցած թուրք ու պարսիկ երիտասարդների ձգտման, այսօր հրապարակում շատ աւելի թուրքեր կան տեղական եւրոպական լեզուների, քան հայեր։ Եւ ինչ զարմանալի բան, որ կեանքի կռւում գիտուններն ու պատրաստուածները աւելի յաջողակ լինեն, քան մենք ինքնահաւաններս։

Պէտք է վերակազմել և մեր դրպրոցները գործնականութեան հիմունքներով։ Ժամանակը վազում է, կեանքի կռիւը թոյլեր և անպատրաստներ չի փայփայում։ Փոխանակ շատախօսութեան, ծրագրային անվերջ վիճաբանութեանց և մանկավարժական ինչ-ինչ տերմինների թուքակռանութեանց, պէտք է գործ, իսկական գործ կատարել և կեանքի համար, պատրաստել գործնական մարդիկ։

Այսպէս բոլոր ասպարէզներում մեր դիրքը խախտուած է, և վտանգուած մեր ապագան։ Անհրաժեշտ է ընդհանուր մի շարժում, վերակազմութիւն և խիստ արթնութիւն՝ կեանքի կռւում խեղճ ու թշուառ չմնալու և օտարների առաջ չստրկանալու համար։

Ամենայն Հայոց Կաթուղիկոսը ստացել է Կայսերական բարձրագոյն բարեհաճ հեռագիր ի պատասխան Ռօմանովների 300-ամեակի շնորհաւորութեան և Ալէքսանդր Նեւսկու զքանդան։

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՇՆՈՐՀ

Թեմիս Գերապ. առաջնորդ Հ. Մելիք Թանգեանը Ռօմանովների թագաւորութեան 300.ամեակի առթիւ շնորհաւորակ. հեռագիր էր տուել Կովկասի Փոխարքային, խնդրելով առ ոտս Կայսեր արկանել իր և Թեմի հայ ժողովրդի ջերմագոյն զգացմունքները այն պաշտպանութեան համար, որ կայսերական գահը ցոյց է տալիս թշուառացած հայերին։

Առաջնորդին պայծառափայլ փոխարքան հաղորդում է, որ Կայսրն ի պատասխան այդ հեռագրի յայտնել է

ՇՆԿԵԼԻՔՕՐԻՆ ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՄ։

ԱՐԱՄԵԱՆ ԴՊՐՈՑԻ 60 ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՅԱՆԶՆԱԽՄԲԻ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԼՈՒՐՋ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ.

—

Դպրոցի ապահովութեան համար, յոբելեանի առթիւ, դիմեցիք հանգանակութեան և հայ հասարակութեան օժանդակութեան։

Եւ այսօր, կարծում ենք, ձեր տրամադրութեան տակ կայ շուրջ 20,000 ր. որ պէտք է պահէք անձեռնմխելի տոկոսներից օգտուելու պայմանով։

Նկատի ունենալով Թաւրիզի օրէցօր հսկայական յառաջդիմումը, նկատի ունե-

---

[1]) Խօսքը մենակ Թաւրիզի մասին չէ։

նալով ռուսներէն և Եւրոպացիներու շատանալը և հաստատուելը Թաւրիզում և այլն, մենք առաջարկում ենք այդ անձեռնմխելի ֆոնդից 3—5000 կամ աւելի ր. տրամադրել՝ շինելու ժամանակակից պահանջներին յարմար համեստ մի թատրոն յօգուտ Ա. Ղամեան դպրոցի Պատմագրեանց տան կողմի ուղղութեամբ։

Արդէն դերասանական խմբերը սկսել են գալ Թաւրիզ, օրէցօր հաղորդակցութիւնն ու շփումը աւելի սերտանում է Ռուսաստանի հետ. կգան շուտով և Ռուս դերասանական, երգիչների, օպերէտների խմբեր, որոնցից մեծապէս կօգտուի մեր դպրոցի ապագայ բեմը։

Ոչ մի տոկոս այնքան մուտք չի տայ դպրոցին, որքան այդ թատրոնը, որի կառուցումը անյեւտանգելի է եւ ժամանակի պահանջ։

Սրահն անգամ եթէ 4—500 մարդ տանի, ունենայ լաժաներ, բալկոն, կախարաններ, միջանցք, բուֆետի տեղ, այդքանը մեզ բաւական է։

Անենք այդ՝ քանի ուշ չէ։ Կգան Եւրոպացիներ կամ ռուսներ նրանք կանեն և մենք արդէն ուշի մնացած կլինենք։

Յոբելեանը կատարելու չափ և դեռ նրանից աւելի օգտակար է արագ կառուցումը այդ թատրոնի, որ մի քանի տարուց իր ծախսը հանելուց յետոյ, կմնայ լրելեար դպրոցի եկամուտի առատ, լաւագոյն և ապահով աղբիւրը։

Այդ պարտքը գլխաւորաբար ընկնում է հոգաբարձութեան վրայ։ Վստահ ենք, որ մեր հասարակութիւնը դարձեալ չի խնայի իր լուման եթէ այդ շէնքի կառուցման գործում փող պակսելիս լինի։

Ցուսով ենք դպրոցի վարիչները լուրջ ուշադրութեան կառնեն մեր առաջարկը և չեն թողնի, որ այդ մեծ շահի աղբիւրը իրենց ծառայեցնեն այլ դրամատէրեր, որ առանց այդ էլ ապահով են և իրաւունք կունենան նրանք ձեռնարկել, եթէ չշտապի այդ անել հոգաբարձութիւնը։

Ա. Տ Վ.

ԴԱՌՆԱԼ ՄԵՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՐԵԶԱՐՊՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

—

Նախորդ տարուայ մեր թերթի համարներով, աշնան վերջին, մենք Սրփահրդար Ազամի և Հաջի Շուլա-էդ-Դովլի լուրջ ուշադրութիւնն էինք հրաւիրել Թաւրիզի փողոցների աղաղակելի անմաքրութեան և լապտերների խիստ սակաւութեան վրայ։

Սրփահրդար Ազամը, որ մօտից հետեւում էր մեր թերթին, անմիջապէս յանձնում է պատշաճ իշխանութեան ձեռնարկել փողոցների մաքրութեան և լապտերների բազմացման։

Կարգադրութիւնը կատարուեց, սակայն շուտով վրայ հասաւ ձմեռը, փողոցները մնացին էլի նոյնը, միայն հայկական և այլ թաղերում աւելացուեցան լապտերներ՝ դարձեալ ոչ բաւարար չափով։

Բաւական է լինել Թաւրիզում և ճշգրիտ գաղափար կազմել թէ որքան կեղտոտ կարող են լինել Պարսկաստանի քաղաքները՝ մանաւանդ ձմեռ ժամանակ։

Ցեխի ձեռքից շարժուել չի լինում։ Բաւական է դիմացից մի կառք կամ մի ձի անցնի, որ դուք ոտից գլուխ ցեխաթաթախ լինէք և այդ՝ դեռ ևս գլխաւոր փողոցներում և յայտնի մարդկանց տան առաջներում։

Այժմ էլ ազատումն չկայ ամպանման փոշուց։ Տանը նստելուց ձանձրացած, կամ գործից յոգնած՝ դուք կամենում էք ելնել փողոց պտոյտի՝ քիչ ապատ և մաքուր օդ ծծելու։ Անցէք մանաւանդ Ղալա թաղի հօթէլների և «Էկօնոմի» փողոցով մինչև Կեաճիլ. զբօսնող մարդկանց բազմութիւնից, անընդհատ երթևեկող կառքերից և արշաւող ձիերից մի ժիսոր ու իրարանցում մի կեղտ ու փոշի կտեսնէք. որ դուք կանիծէք ձեր Պարսկաստանում՝ ևս առաւել ձեր Թաւրիզում լինելը և փողոց դուրս գալը։

Զարմանալի է, որ այս անվերջ կեղտ ու փոշում մենք կոյր ու թոքախտներ չենք դառնում։ Այս խայտառակութեան վրայ աւելացրէք, կառավարութեան հրամայողութեան բացակայութեան պատճառով, և այն, որ տուն ու խանութ շինողները փողոցներում հողաբլուրներ են բարձրացնում, խանգարում կառքերի և մարդկանց երթևեկութիւնը, անձրևային օրերում ստեղծում անանցանելի ցեխ՝ և դուք կզգաք թէ ինչ դժոխքում ենք ապրում։

Կառավարութեան հրամայողական և անյետաձգելի պարտքն է կարգադրել որ ողջ քաղաքում ամեն մի տուն շինող, ինչպէս այդ Եւրոպայում և Ռուսաստանում օրէնք է, պարտաւոր լինի հող ու զանազան նիւթերը կիտել իր բակում և ոչ փողոցում, և քաշել տախտակէ մի պատ մինչև իր շինութեան վերջացնելը, որպէս զի մարդկանց թոքն ու զգեստները ազատ մնան «ամենայաղթ» փոշուց։

Ապա պէտք է կարգադրել, որ բոլոր փողոցները, մանաւանդ երթևեկութեան ամենայայտնի անցքերը, առաւօտ երեկոյ ջուր շաղ տան և այդ փողոցներն ունենան յատուկ աւելողներ։

Կարգադրել, որ ոչ ոք հոտած ամբարներից հոտած ջրեր չթափէ և փողոցները շաղ չտայ, մի բան որ սովորական է Թուրքերի մէջ։

Կարգադրել, որ ոչ ոք իւր տան կեղտն ու աղբիւսը չթափի լեցնի փողոցը և մարդոց սրտախառնունք պատճառի։ Դորա համար քաղաքի հաշուին պէտք է կառքեր պահուեն, որ այդ աղբիւսները տանեն թափեն քաղաքի դրսերում։

Խստիւ արգելել, որ ոչ ոք իւր բնական պէտքերը, ըստ արևելեան տգեղ սովորութեան չհոգայ փողոցներում։

Ապա քաղաքացոց հանգստեան և ապահովութեան համար պէտք է աւելացնել լապտերների թիւը և վերացնել գիշերային անուններ։

Իւրաքանչիւր նոր կառուցուող տան կամ խանութների վրայ պէտք է նշանակել հսկոյներ, նախ որ փողոցները չնեղացուին և երկրորդ՝ շէնքերը շինուեն ընդհանուր մի յատակագծով և որոշ ճարտարապետութեամբ՝ դրսից եփած աղիւսներով ի գեղեցկութիւն քաղաքի։

Այս կարևոր նոյզութիւնների վրայ մենք օր առաջ հրաւիրում ենք մեր նահանգապետութեան լուրջ ուշադրութիւնը և խնդրում առանձին խնամատարութիւն՝ զոնէ մեր տառապող ազգաբնակչութեան մոռացուած առողջապահութեան վրայ*)։

---

*) Այս յոդուածի պարսկ. թարգմանութիւնը յաջորդ համարում, որ նահանգապետութիւնը մօտից տեղեակ լինի մեր պահանջին և քաղաքի առողջապահութեան կարիքներին։

ՄԵԶ ԱՍՈՒՄ ԵՆ

Մեր համակիրները և «Միտք» ը գրնահատողները ցաւելով մեզ հարցնում և ասում են ինչու երբեմնակի «Միտք»ի հրատարակութիւնը դադարում է և նա անխափան ու պարբերաբար լոյս չի տեսնում։

Եթէ մեր հասարակութեան կամենալուն յաջորդէ և գործը, դրականապէս մի բան անելու, ապա «Միտքը» կը հրատարակուի անխափան և յարատև։

Օտարազգի թերթերի բաժանորդագրուելիս հայը էն գլխից շտապում է հասցնել բաժնեգինը, որովհետև այլ կերպ ծիծաղելի կլինի Իսկ հայ թերթի բաժանորդագրուելիս՝ նա կամ չի վճարում և կամ ամիսներ սպասեցնելուց յետոյ՝ մեծ դժգոհութեամբ առաքում է փողը։

Դէպի օտար թերթերը ցոյց տուած պարտաճանաչութիւնը, եթէ հայը իւր մայրենի թերթերին ցոյց տայ, ապա կապրեն մայրենի թերթերը և անվերջ պոստարկղներ այդ մասին այլ ևս չեն լինի։

Մեր թերթի պարբերական հրատարակութիւնը մեզ թէ բարոյական և թէ նիւթական (որ ցարդ չէ եղել պարտքից բացի) շահ ունի։ Արդ. եթէ մեր յարգոյ բաժանորդները, այստեղ Թաւրիզում և դրսերում, ըստ օրինի, մեզ հէնց սկզբից հասցնեն բաժնեգները, ապա մենք երբէք ընդհատումներով չենք հրատարակի թերթը։ Մենք սպասում ենք հասարարութեան և բաժանորդների աջակցութեան։ Քանի քանիները կան, որոնց բարեացակամութիւնը թէ խօսի, կարող են ապահովել «Միտք»ի կանոնաւոր հրատարակութիւնը։ Թող տայ առաջին օրի դակը, ում սրտին մօտ է մեր ժողովրդի լուսաւորութիւնը և առաջդիմութիւնը։

ԳԵՂԱՐՈՒԵՍՏ

ՏԻԿԻՆ ՍԻՐԱՆՈՅՇԻ ԳԱՍՐՏՕԼՆԵՐԸ ԹԱՒՐԻԶՈՒՄ

I

Նարաթներ առաջ նախօրօք ցրուած յայտարարութեանց համաձայն սպասում էինք տիկին Սիրանոյշի խմբին, որ վերջապէս Թաւրիզ ժամանեց Ապրիլ 3-ին, և նոյն ամսի 5-ին, 6-ին և 7-ին իրար ետևից տուեց հեռաւոր ներկայացումները։

Արամեան դպրոցի թատերասրահում առաջինը տիկին Սիրանոյշը խաղաց Գերմանացի յայտնի հեղինակ Զուդերմանի «Հայրենական տուն» գրաման։

Դրամայի հերոսն է օրիորդ Մագդան (տ. Սիրանոյշ). որ, հակառակ հոր ցանկութեան մերժում է իր ձեռքը խնդրող Պատոր Հէֆտէրլինկի (Ոսկանեան) հետ ամուսնանալ և այդ պատճառով թողնում է իր հայրենական տունը։ Մագդան իր սիրոյ մէջ խաբուելուց և գր. Քօն Կէլերից (Ս. Թորոսեան) մի զաւակ ունենալուց և նոյն գօքտորից մերժուելուց յետոյ իրեն նուիրում է գեղարուեստի։

Նա յամառ աշխատութեամբ շուտով դառնում է հռչակաւոր երգչուհիներից մէկը։ Լիացած իր շահած դափնիներից, 13 ամեայ բացակայութիւնից յետոյ, նա դառնում է իր ծննդավայրը՝ իր հայրենական տունը՝ վերստին մտնելու լուսով։ Նորա գալուստը խանում են մօրաքոյրը- Գրանցիսկան (տիկին Փառանձեմ) և պատոր Հէֆտերլինկը։ Գերմանական զինուորական շկոլայում թլծուած և անխորտակելի ու հաստատուն կամքի տէր հայրը-Եվարդէն (Ռանթուրճեան) չի ուզում լսել ապշկայ կամ նորան տուն թողնելու մասին։

Միայն պարտօրի անմերժելի միջամտութիւնը կարողանում է չզիջող և արդէն կամքուած ստացած հօր յամառութիւնը թեքել և Մագդային տուն բերել։

Մագդան հայրենական տանն է և, ըստ պատարի առաջարկի, համաձայն է մնալ այնտեղ, միայն այն պայմանով, որ տանը իրենից ոչինչ չհարցնեն իր ապագայի մասին։ Պատարը խոստանում այդ։ Ինչպէս հոր հետաքրքրութիւնը և մորթեցնող փոն Կէլլէրի կրկին երևալն ու Մագդային-այդ նախկին զոհին-նորէն կամակատարք դարձնելը և նրանից խստիւ ու արժանապէս բացատրելը ակամայից բացում են Մագդայի անցեալի բարոյական անկման տխուր պատկերը։ Այդ գաղտնիքի բացումը ծանր ազդեցութիւն է անում հոր վրայ և նա ընկնում է հիւանդագին դրութեան մէջ։ Խոյտառակութեան վերջ տալու համար հայրը խոստանում է՝ Մագդային համոզել ամուսնանալ Փոն Կէլլերի հետ, որ քիչ առաջ համաձայնել էր կին առնել Մագդային, եթէ վերջինս կթողնէր իր զաւակին, իրենց երբեմնի յանցաւոր սիրոյ պտղին ծնունդին։

Պատուախնդիր հոր առաջարկները նպատակին չեն հասնում և նա հոգեպէս բորբոքին տակն ու վրայ է լինում։ Այդ տա ջալից բոպէներին Մագդան հօրը յայտնում է, որ Փոն Կէլլերը իրենց զայթակղեցնող առաջին և վերջին անհատը չէ։ Բարոյական մաքրութեան յոյժ նախանձախնդիր հայրը անկարող լինելով տանել կայծակնահարող այս խոստովանութիւնը, ուզում է ապանել իր ապշկան, սակայն ինքը կաթուածահար է լինում և մեռնում։ Այսպէս վերջանում է դրաման, հանդիսատեսին թողնելով հաւանական ենթադրութիւն անելու Մագդայի, որ փոքր քոյր Մարիէ(տիկին Ս. Ս. ին Մագդան իր դարձից յետոյ խոստացել էր հարուստ օժիտով պսակել երիտասարդ զինուորական Մակսի (Մոսեան հետ) և մնացեալների կեանքի յետագայ ընթացքի մասին։

Դրուածքը մարի մի հոյակապ արտադրութիւն է, որի մէջ շքեղօրէն զարդացուած է Մագդայի սղջ էութիւնը։

Զուդերմանի այս գրուածքը յանձին տիկին Սիրանոյշի գտել է իր ամենաարժանաւոր ներկայացնողին։ Մեր խորին համոզմամբ ոչ միայն հայ՝ այլ և օտար բեմերի վրայ, տիկին Սիրանոյշը կմնայ Մագդայի անմրցակից խաղացողը։ Տիկինը շնորհիւ իր ազդու և նուրբ խաղի արժանացաւ հասարակութեան բուռն ծափահարութեանց։

Դժան և նահապետական բարքերի անալլալելի մաքրութեան խորապէս նախանձախնդիր հօր դերում պ. Սանթուրճեան հանդէսեկաւ բաւարար չափով։ Պարոնն ունի ուժեղ ձայն որ մի պլիւս է նրա համար։ Աշխատասիրութիւնն ու դերերի խղճմտաուսումնասիրութիւնը նորա համար կստեղծեն պատուաւոր ապագայ բեմական ասպարիզում։

Պատարը գեղեցկապէս ամբողջացած մի տիպ է այդ գրուածքում։ Պ. Ոսկանեանը իր հանդարտ շարժմունքով, անխռով կեցուածքով լաւ պատար էր Նորան, իբրև արժանապէս Աստուծոյ մարդու, լսում ու լարգում էին ամենքը, ուստի պ. Ոսկանեանը այդ դերում իր խօսքերին աւելի ազդու շեշտ և համոզականութեան տոն պէտք է տար։ Այդ դերի

լուրջ ուսումնասիրություն պ. Ոսկանեանի մէջ կգտնի իր լաւագոյն խաղացողներից մէկին։ Տիկին Արուս. պարզամիտ, անմեղ, և անկեղծ սիրոյ Ֆարլի դերում իր մտածուած խաղով աչքի էր ընկնում։ Ֆոն Կելլերի դերում պ. Թորոսեան պէտք եր և ան բերէր առաւել ճարպկութիւն, բժշկական նուրբ շարժեր և հոգեկան բուռն լոյզեր, ինչպէս և ինքնազսպում՝ Մագդայի հետ ունեցած բուռն բացատրութեան և ապա Եվարցի հետ ունեցած խոսակցութեան միջոցին։ Միւսներն աշխատում էին պահել անսամբլը։ Սրահը, գրէթէ, լիքնէ էր։

II

Ապրել 6-ին խումբը Լիլաւայում խաղաց Գորտինի «Միրրա- Էֆիսս»ը։ Այս պիեսը Մայսուրեան—Զարիֆեան խումբը նախայեալ տարի խաղացել էր երկու անգամ. գրուածքն արդէն, ուրեմն իբրև ծանութ մի գործ, այս անգամ հասարակութիւն չէր գրաւել։ Խաղը թոյլ էր։ Առաջին 3 շարքերում աթոռները դատարկ էին։

III

Նորութիւն էր Թաւրիզի հասարակութեան համար նաև Նեմեժինի «Երկրորդ Երիտասարդութիւն» դրաման, որ խաղացուեց Ապրլի 7-ին Աբրամեան դպրոցի թատերասրահում։

Կոստանդին Գոտովցև (պ. Արաքսեան) չափահաս աղջիկ ու որդի ունենալուց յետոյ, ծերութեան մտիկ հասակում երիտասարդական յոյզեր է զգում իր մէջ և սառչելով խիստ պարկեշտ ամուսնուց (Վալենտինա Ալէքսանդրովնա տ. Սիրանոյշ), սիրահարւում է գաւակների վարժուհի Ծատիանա Ցելեգինայի (տ. Աշխէն) վրայ։ Այս սիրահարութեան գաղտնիքը բացում է Մինագօրան (տ. Վարդիթեր) և գործը հասնում է դժբաղդ ամուսինների բաժանման։ Ալէքսանդրովնան գնում է իւր եղբօր՝ Եգօր Ալէքսանդրովչի (Սանթուրճեան) մօտ և ապրում իւր ձեռքի աշխատանքով։ Սակայն նա այդտեղ ևս չէ ազատւում դաժան և դաւաճան ամուսնուց, որ յայտնւում և առաջարկում է կնոջ՝ իր վրայ վերցնել ապահովչանի յանցաւորութիւնը, որպէսզի նա հանգիստ կենալցել կարողանայ նախկին վարժուհի Տելեգենայի հետ։ Հրէշաւոր առաջարկութեան արդիւնքը լինում է այն, որ մայրասէր Վիտալին (Ոսկանեան) գնում և սպանում է Տելեգինային, իսկ այդ սպանութեան համար նա ուղարկւում է աքսոր, մենակ և անպաշտպան թողնելով վշտակոծ մօրը և քրոջը Անիստային (տ. Արուս)։

Ամբողջ դրաման ներկայացնում է կեանքի մի խիստ տրագեդիա, ոլի քաւութեան նոխազը լինում է գաւակասէր, հաւատարիմ և պատուախնդիր Ալէքսանդրովնան տ. (Սիրանոյշը)։

Տ. Սիրանոյշը իւր մտածուած ու կենդանի խաղով հասարակութեան տուեց գորովագութ, բայց և վշտերում տառապող մի կնոջ լիակատար տիպը։ Նատապաւորիչ էր կնոջ խաղը աքսորի դատապարտուած որդուց բաժանուելու րոպէին։ Տիկինը վարձատրուեց յաճախակի ծափահարութիւններով։ Յաջող էին տ. Արուսեակ Անիստայի, տ. Վարդիթեր Մինագօրայի, Սանթուրճեան Եգ. Ալէքսանդրովիչի և Ոսկանեան Վիտալինի դերում։

Պ. Արաքսեան, որի խաղին սպասում էինք հետաքրքրութեամբ՝ յանկարծ հիւանդացաւ ջերմ ու տենդով և, միայն անսամբլը պահելու համար դուս եկաւ բեմ՝ լիակատար դերը արտասանելու նպատակով։ Այդ հանգամանքը, մանաւանդ ուշադրութեան

խաղում էր հատ վերարկուով, խիստ մանրացնում էր խաղի տպաւորութիւնը։ Տելեգենայի դերում մեզ չբաւարարեց տ. Աշխէն։

Դրամայից յետոյ Ոսկանեան ամուսիններն խաղացին «Ընտանեկան փոթորիկ» վոդվիլը, որ անցաւ խիստ սահուն և յաջող։ Տիկինը դերազանցում էր։ Ուրախութեամբ կարելի էր երկրորդ անգամ նոյն վոդվիլը և նոյն խաղացողներին տեսնել։

Թատերագէտ

IV

«Երկրորդ Երիտասարդութիւն» դրամայի վերջում բեմից յայտարարուեց, որ յաջորդ անգամ կխաղացուի «Խանում» և «Վէրբչկայի գաղտնիքը» և կուպլետներ կարտասանէ Թաւրիզի կեանքից պ. Արաքսեան։

Սակայն Ապրիլ 9-ին Ղալայում փոխանակ յայտարարուածների բեմ հանուեց «Կարմիր Բժիշկ» դրաման։ Դրամայի բովանդակութիւնը թէպէտ և հասարակաւն լայն շերտերի կենցաղը չի շոշափում, այլ՝ պետական բարձր ու մասնակի շրջանի մարդոց խուլ մրցում, այնուամենայնիւ շոշափած հարցերը սրովհետև կրում են նաև քաղաքական-պետական խնդիրներ, այդ պատճառով դրաման հանդիսականների ուշադրութիւնը լարուած պահում է մինչև վերջ։ Ոսկանեան «Կարմիր Բժիշկի» դերում յաջողութեամբ տարաւ անալլայլելի կամքի տէր բժշկի և անդաւաճան մարդու դերը։ Դքսուհու դերում տ. Վարդիթերը կարող էր և բոլորովին չլինել, այդ դերը կարող էր կրճատուել։ Պ. Թորոսեան իր համեստ, ամաչող նորաւարտ բժշկի դերում ունէր բնական խաղ։ Տիկ. Արուսի համար կարելի է ասել, որ նա իր վերցրած դերերում միշտ պատուով է ելնում։ Տիկ. Աշխէնը, որ այդ դրամայում կարևոր դեր ունէր և երևում էր որ աշխատում էր ամբողջացնել իւր դերը, այնուամենայնիւ նորա խաղը չէր ազդում։ Տիկնոջ խաղը չի կրում ջերմութիւն, գունաւորումն և չի առաջացնում խորունկ տպաւորութիւն։ Պ. Սանթուրճեանը, որ առ հասարակ ըմբռնում է իւր դերը, այդ օրը կարծես բաւականաչափ չէր խորանթափանցել իւր դերում։ Ներկայ խմբի խաղերում առ հասարակ աչք ծակող կերպով երևում է ռէժիսէորական մասի խիստ պակասութիւն, ոչ բաւականաչափ լաւ հսկողութիւն։ Դրամայից վերջ խաղացուեց ծանօթ Կրութկրութը, որի մէջ ռուս զինուորի դերը պէտք է խաղար պ. Արաքսեան, սակայն կրկին հիւանդ յայտարարուեց և մենք միջոց չունեցանք մեր երբեմնի յայտնի կոմիքին ուէ դերում տեսնել և գնահատել ու չափել նրա ոյժերը։ Խիստ յաջող գրիմով, կենդանի, բայց և մեծ չափազանցութիւններով աղա Մուրադի դերում դուրս եկաւ պ. Ոսկանեանը, որ հասարակութիւնից խլեց երկարատև ծափեր և ծիծաղ։ Միւսները թոյլ էին։ Տիկ. Սիրանոյշի այդ ներկայացմանը դեր չունենալու պատճառով շատ քիչ տոմսակ էր ծախուել։

V

Ապրիլ 16-ին Էլի Ղալայի բեմում խաղացուեց Մէդէան։ Սրահում տեղ չը կար։ Դրուեցան աւելորդ աթոռներ։ Տարիներ շարունակ Մէդէայի դերում դուրս է եկել տիկ. Սիրանոյշը, և միանգամայն մշակել իւր խաղը։ Լքուած, զաւակակորոյս և վրիժառու մի կնոջ հոգու բոլոր փոթորկալից ելևէջները նա տուեց իր ամբողջ խորութեամբ և ուժգնութեամբ։

Որքան և հրաշալի է տիկինը Մէդէայի դերում, այնուամենայնիւ մենք չէինք կամենայ այդ պիեսան բեմ հանուէր։ Դժուար է մի քանի ժամ շարունակ տանել ու տեսնել մի կնոջ, որ զազանացած, բորենիացած՝ ամեն կողմ արհաւիրք է սփռում, զաւակներին սպանում և հոգու վրայ սարսուռ ու սարսափ բերում։ Տիկինը բազմիցս ծափահարութիւններով բեմ կանչուեց։ Ոսկանեան թոյլ էր առանց այդ էլ անգոյն Յասոնի դերում։ Թոյլ էր Արաքսեան փիլիսոփայի դերում և դերը չգիտէր։ Պ. Սանթուրճեանի թագաւորը խիստ անգոյն էր։ Տիկ. Արուսը Կրէուզայի դերում իւր խելացի խաղն ունէր։

ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՆՔ

Ապրիլ 30-ին կաթոլիկների սրահում դրուած էր տիկին Սիրանոյշի բենեֆիսը*)։ Ճարտարապետորէն բացակայում էր հոծ հասարակութիւն։ «Համլէտի» ներկայացման խիստ անկարգապահութիւնից դժգոհ մնալով և ենթադրելով, որ նոյնը կպատահէր և այժմ, հասարակութիւնը չէր եկել։ Չնայած խումբը մի թռուցիկով աթոռների սպասաւորմանը էր յայտարարել։ Ինչ և եղել էր նախորդ նեղ կայցմանը, այնուամենայնիւ մեր հասարակութիւնը պէտք է գար բենեֆիցիանտի ներկայացմանը։ Թաւրիզը չպէտք է մեր շնորհալի հիւրի հետ այդպէս վատ վարուէր։ Ինքներս ամենամեծ դժգոհն էինք «Համլէտի» բարեբնաբանութիւնից, բայց և այնպէս դատապարտելի ենք գտնում մեր հասարակութեան անփափկանկատութիւնը բենեֆիցիանտի հետ այդպէս խիստ վարուելու համար։ Ինչու՞ հոգոր ու մի անտանելի անարգանք և բռնութիւն տարած մեր հասարակութիւնը դիւրազգացութիւն պիտի ցոյց տար միայն ներկայ դէպքում և այն էլ մի տրտիսի հազուագիւտ հիւրի նկատմամբ։ Մեր ջէնտլմէնութիւնը այդ չէր պահանջում։ Եթէ կար դժգոհութիւն դա պէտք չէ արտայայտուէր այդ գիշեր, այդ ձևով և այն էլ մեր տեսի այդ փալլուն աստղի դէմ։ Մեր արժանապատուութիւնը թելադրում էր աւելի վեհանձն վարմունք։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուրմիա Մարտ 2.

Անցեալ շաբթում արժ. առաջնորդ հայր Մ. Թանդեանից ստացուեց մի հրամանագրութիւն՝ուղղուած գաւառների գործակալներին և քահանաներին, որով պատիրում է վերջ դնել իրենց յանձնուած պաշտօնի անփոյթ վերաբերմունքին։

Թողնելով միւս գաւառները, մենք մեր խօսք կմատնաւորենք միայն Ուրմիոյ գաւառի հոլութեան վրայ։

Կարուց է ինչ գործակալական խորհուրդ գոյութիւն չունի այստեղ։ Գործերի դեկը անցել է ամն քահանայ Յովհաննէս Գասպարեանի ձեռքը. քահանայ, որին բնորոշող անուն տալու համար արքանն ասենք, որ գրագիտութիւնից միայն իւր անունն ազգանունը ստորագրել գիտէ։ Ուրեմն պարզ է թէ ինչպէս է վարել այժմ տեղիս ազգային եկեղեցական գործերը։

Դոլբոցներ միայն մի երկու գիւղում գոյութիւն ունեն. ա)Ռահվալում որ բացուել է նոյեմբ. սկզբից. ապա բ)Գեաղարադում՝ դեկտ. վերջից։ մնացած գիւղերն ու քաղաքը հոգկական դպրոցներից զուրկ են։

Եթէ ուզենք թուել կատարուած չհաստատների, Լուսաւորչական աղջկանց այլ

*) Խաղացուում էր „ՏՈՍԿԱ"ն

լաւաւանների եկեղեցիներում պակելու, գործավարի իւր գրպանը հարստացնելու և վերջինիս այլ սխրագործութիւնների հարցը, ժամերկհարկաւորուեն։ Թէև պահանջ զգացուելու դէպքում ինձ ծանօթ խնդիրները (որոնք շատ են) պատրաստեմ թուելու։

Բայց յամենայն դէպս սիրում ենք լուսաբ, որ այդ հրամանագիրը և հայր սուրբի Ատրպատականում ներկայութիւնը վերջ կտայ դրանց։

Մենք ժամանակին կոչ անենք ալել հոգևոր իշխանութեանը, անուշադրութեան չմատնել առանց այն էլ մոռացած ժողովրդին, և կարող անձանց գործի դեկավար նշանակել որպէսզի նման արդիւնք չստացուէր. երևի անկախ պատճառներից ձայն բառաառոյ յանապատի մնացած այդ կոչը այժմ արձագանք կգտնի։

Հայր սուրբը իւր հրամանագրի 3-րդ կէտով գործակալից պահանջել է տեղեկութիւն իւրաքանչիւր գիւղի դպրոցից, ուսուցչից, աշակերտներից և այլն։ Մի այլ անգամ կտանք Ռահվա գիւղի ծխ. դպրոցի մանրամասն տեղեկագիրը։

Ոմն

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴՈՐԾԸ ԽՈՅՈՒՄ

27 Մարտի

Կուզէի լոկ նկարագրողի դեր կատարել՝ տալով հարևանցի տեղեկութիւն Խոյ քաղաքի հայերի արդի դրութեան մասին։ Այժմ Խոյի հայերը մի տարօրինակ երկպառակութեան մէջ են գտնուում միմեանց հետ և ահա պատճառները։

1912—13 ուսումնական տարուայ համար Խոյի «Ս Վարդանանց» ազգային դպրոցի հոգաբարձութիւնը հրաւիրում է Երևանի թեմականաւարտ պ. Արամ Յարութիւնեանին Հոկտեմբերին (ըստ սովորութեան), որը կամաւոր զինուոր էր Խոյում և վերջացրել էր ծառայութիւնը։ Վերոյիշեալ պարոնը արդէն հրաւիրուած էր և մնում էր մի ժողովուրդ, որ պայման ստորագրէին բայց ժողովուրդ չկայ, որ ժողով լինի։ Նախ քան այդ, երբ Գերման Հայկական որբանոցի կառավարչուհի օր. Հառնակը լում է ազգային դպրոցի բացումը, շտապում է իր մօտ կանչել պ. Խուդավերդուն, ազգային դպրոցի հոգաբարձութեան նախագահին՝ խանգարել*) գործը, որպէսզի իր դպրոցը չխանգարուի, վերապահելով Խոյեցի երախաների ընդունելութեան իրաւունքը պ. Խուդավերդուն Ս. Գէորգի տօնին երբ մնացեալ հոգաբարձուները և Խոյի շրջանից շատ հայեր գիմում են Վառ գիւղի Ս. Գէորգ եկեղեցին ուխտի, գալիս է պ. Արամը և առաջարկում իրեն դրական պատասխան տալ։ Եւ ահա յարմար առիթ գործը խանգարելու։ Առաջ է գալիս պ. Խուդավերդին իր երկար հասակով և պարսկական քաղաքականութեամբ յայտնում, որ իրենից զատ էլ մարդ չի գալ ժողովի, որ Խոյի հայերը ուսուցիչ վարձող՝չեն, լաւ կանէք գնաք ձեր գործին։ Այսպիսով ճանապարհ է գնում ուսուցչին փոխելով հոգաբարձուների խօսքը (ուխտի գնացողների) եթէ գալ պ. Արամը՝ յայտնել որ պայմանը

*) Ցետոյ մեզնից նեղանում են կաթոլիկամ բողոքական դառած Հայերը, երբ մենք մեր ճառերում վնասակար, խորթացնող և հակազգային ենք համարում միսիոնարների գործունէութիւնը մեր մէջ։ Յաջորդիւ մենք կփաստենք այդ միսիոնների հայավնաս, ոգեսպան և հակաքրիստոնէական գործունէութիւնը և յուսով ենք, որ անգիտաբէն իրենց մայրենի եկեղեցին թողնողները կզգան իրենց սխալը... Ե.Խ

մնաց կիւրակի օրուան մինչև իրենք էլ ուխտից վերադառնան, կամ պայմանը կապեն առանց իրենց. որովհետև գործը արդէն վերջացուած է։ Ահա հոգաբարձութեան խօսքը ինչի վերածուեց։

Ամենայն ինչ խաղաղ էր ընթանում որովհետև որբանոցը ունէր երկու ուսուցիչ, մէկը մասնագէտ ռուսերէնի հայերէնի և միւս կողմից էլ օր. Հառնակը Ֆրանսագէտ ու Անգլագէտ՝ չհաշուած իր մայրենի լեզուն-Գերմաներէնը. բոլորը սովորեցնում էին Խոյեցի երեխաներին ու որբանոցի սաներին. էլ ինչ դարդ։ Բայց «Աւա՜ղ փառաց անցաւորի» Յունվարին հեռացուում է ռուսագէտ ուսուցիչը իր անվայել վարք ու բարքի պատճառաւ, իսկ միւսը Փետրվարի 20-ին բարեկենդանի տօները պահելու համար ըստ պրոցական սովորութեան։ Եւ որբանոցը մնում է օր. Հառնակի, որբանոցի կիսակիրթ օրիորդների ու որքան լսել եմ ծախսարար պ. Զաքարի վզին, իսկ վերոյիշեալներն էլ գործադրում են եղա տանելու մեթոդը։

Այդ դրութեան մէջ Խնլեցի մի խումբ հայեր տեսնելով այդ ցաւալի դրութիւնը վարձում են 3 ամսով մի ուսուցիչ Նուշու թեմականաւարտ, որպէսզի մի կերպ փոխարինեն երեք տարով փակուած դպրոցի կրուստը։ Իսկ միւս մասը հակառակում է «ժամանակն անցած է» աղաղակելով և տները մտնելով ու երախաների ծնողներին սպառնալով, որ չուղարկեն ազգային դպրոցը, այլ ուղարկեն որբանոցը։

Վերջիններիս տգիտաբար պաշտպան է հանդէս գալիս տեղիս նորածիլ «կրթասիրաց ընկ», և սպառնում դպրոց բացողներին ռուսական հիւպատոսարանի միջոցաւ, որքան լսել եմ։ Տարօրինակ է, մարդիկ փոխանակ հետևելու իրենց ընկերութեան նպատակին, փոխանակ դպրոց բանալու և նրա շահերի համար մտածելու, արգելում են և օտարներին ստոր ծառայութիւն մատուցանում. «Ողբամ զքեզ Հայոց աշխարհ»։

Եւ ահա այդ սոսկալի դրութեան մէջ առաջ եկան այսպիսի հարցեր, որոնց վնայ ծիծաղել կարելի է միայն, այն է թաղական բաժանում, որ ամեն մի թաղ իրեն համար դպրոց պահի։

3 թաղը միասին չկարողացան մի դպրոց բանալ և ահա յանկարծ իւրաքանչիւր մի թաղը առանձին բանալ է ուզում։ Հանգիստ ոսկրներիդ անմահ Ջիւանի «Աքաղաղը ամբիոն է բարձրացել խելքին աշեցէք»։

Ես լռութեամբ կտանէի այդ բոլորը, բայց պատուական թերթիդ երկրորդ համարի առաջնորդողը, որ տպել էիք առաջնորդի պարտականութիւնների մասին, ինձ ևս դրդեց սրանով հրաւիրել թեմական լուրջ ուշադրութիւնը այս մոռացուած անկիւնի վրայ։

Պաfu—Տo

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մեծարգոյ պարոն.

խմբագիր.

Թոյլ տուէք Ձեր պատուական թերթի միջոցով մեր խորին շնորհակալութիւնը յայտնել այն յարգելի տիկիններին և օրիորդներին, որոնք յարգելով մեզ և մեր նպատակը՝ սիրայօժար նուիրաբերեցին դրամ և վիճակախաղի իրեր՝ Արամեան դպրոցի 60-ամեայ յոբելեանի առթիւ։

Մեր ձեռով հանգանակուել է 1298-դրն կանխիկ դրամ և 75 կտոր զանազան իրեր։ Դրամը յատկացրել ենք յիշեալ դպրոցի փոքր դասարանների համար վերջին սիստեմի սեղան-նստարանների շինութեան, իսկ վիճակախաղից ստացած արդիւնքը, մնացեալ իրերի հետ միասին, յանձնել ենք պատուարժան հոգաբարձութեան՝ տնօրինելու ըստ իւր հայեցողութեան յօգուտ նոյն դպրոցի։

Հանգանակիչ յանձնախմբի անդամուհիներ

Վիկտորիա Ե. Հնազարեանց

Արփենիկ Ջէմալ

Մարիամ Բարխուդարեանց

Թաւրիզ. 20 Մարտի.

—

6 Մարտ Թաւրիզ

«Արամեան և Ս. Աննայեան» երկսեռ դպրոցների մանկավարժական խորհուրդը իւր մարտ 6-ի նիստում խորհրդակցութեան նիւթ դարձնելով դպրոցներիս 60—ամեայ յոբելեանի առթիւ Թէհրանից ինչ որ «Յոբելեանական յանձնախումբ» ստորագրութիւնը կրող, իբր թէ շնորհաւորական բայց իսկապէս ներկայ հոգաբարձական և ուսուցչական կազմի նկատմամբ յարձակողական հեռագիրը՝ կարճ խօսակցութիւնից յետոյ նկատեց, որ իր արժանապատուութիւնից ցած է նման մի հեռագրի առթիւ որևէ վերաբերմունք արտայայտելը։

Ի դիմաց մանկավարժական ժողովի

Տեսուչ՝ Ա. Տ. Վարդանեան

Քարտուղար՝ Վ. Վասիլեան

ԼՈՒՐԵՐ

ԹԱՒՐԻԶ

✦ Արամեան դպրոցի նախկին ստնուհիներից մի երկրորդ խումբ տիկիններ և օրիորդներ յոբելեանի առթիւ տուած ներկայացման փողերով գնել և դպրոցին են նուիրել 3-դիւժ։ աթոռներ։ Մնացած փողերով էլ մտադիր են բեմի համար դիւան և բազկաթոռներ գնել։

✦ Առաջնորդարանի պահանջով Ղարադաղից բերուած և շաբաթներից ի վեր Շուլջադովլի մօտ առանձին սենեակում պահուած Ղահրաման խանից դպրոցապատկան և միւս հայ գիւղերի վնասի համար 800-թմնի-վնասի պարտամուրհակ առնուեց։ Այս գործում, որպէս մեզ ասում են, մեծ դեր է ունեցել պ. Մմբ. Մել. Սարգսեանը։

✦ Առաջնորդ Հ. Մ. Թանգեանի բ. գալստից յետոյ առաջնորդարանում և եկեղեցու բակում կատարուել են կահաւորութեան և շէնքերի բաւական նորոգութիւններ։

✦ Առաջնորդարանի կողմից Ապրիլ 26-ին հեռագրուեց Ղարադաղ, որ Քէյվանի ներկայացուցիչները գան Թաւրիզ յայտնի աւերիչ Քարիմխանի դէմ վարած դատը վերջացնելու համար։

✦ Համլէտի ներկայացման գիշերը կաթոլիկների սրահում (Ապրիլ 27) հասարակութիւնը կարգապահութեան կողմից մնաց խիստ դժգոհ։ Ծախուած էին 25 կարգի տոմսեր, մինչդեռ աթոռները շարուած էին 19 կարգ։ Մարդիկ թափուել էին իրար վրայ աթոռ պահանջում և մնում ոտի։ Եթէ չլինէր Համլէտի ներկայացումը հասարակութիւնը հաւանօրէն կթողնէր սրահը։ Կար անվերջ աղմուկ և գոռգոռոց։ Յարգոյ տիկնոջ «Լինե՞լ թ՞է չլինել»ի հրաշալի մենախօսութիւնը փչացաւ, որովհետև մարդիկ կռուով էին զբաղուած և տեղ էին պահանջում։ Յաւալի է որ հասարակութեան ետ այդպէս անուշադիր են վարուում։ Լաւ է քիչ մուտք ապասել, քան հասարակութեան դրամն առնել և նրան ոտքի վրայ պահել, ջղայնացնել։ Ո՞վ է մեղաւոր այդ հարցում այդ այլ խնդիր է, բայց փաստն այն է, որ իրաւացիօրէն մեր հասարակութիւնը մնաց դժգոհ և վիրաւորուած։ Կայ այդ առթիւ ընդհանուր և դառն բողոք։

✦ Բաֆֆու մահուան 25-ամեակը լրացաւ Ապրիլ 24-ին։ Արամեան դպրոցի այդ առթիւ և այդ օրը տալիք երեկոյթը լետաձգուեց։

—

✦ Յովհաննէս Յովհաննիսեանի 30ամեայ գրական և ուսուցչական գործունէութեան յոբելեանի առթիւ Արամեան դպրոցի հոգաբարձութիւնն ու մանկավարժական խորհուրդը Ապրիլ 26-ին հեռաձիրն ուղարկեց Բագու։

ԿԱՐԱՄՈՒՐԶԱ

Ողջոյն սիրուած բանաստեղծին և ուսուցչին։

ՕԶԴԵՑԻՆ

✦ Կոփամաճեանի սպանութիւնից յետոյ յայտնի կուրսի մարդիկ նորէն սպանելեն «Վանտոսպ» թերթի երկու աշխատակիցների և յանուն ինքնապաշտպանութեան էլի սպանութեամբ և տեռորի երկիւղով փողերը են կորզում Վանի և շրջակայքում։ Ըսպանումէ Քիւրդը, սպանում է Տաճիկը, այժմ յետ չէ մնում և Նորանազատող» Հայը։

✦ Հայկական հարցը ստանում է հերթական ընոյթ։ Ռուսաստանը դրական քայլեր է անում յօգուտ տաճկահայերի պաշտպանութեան։

ԸՐՏՈՒՔԻՆ

✦ Յունվ. 10—ի հակայեղափոխութեան հերոսները Տաճկաստանը հասցրին անլուր անկման և ստորացման։ Քեմալ փաշային «գաւառաճան» յայտարարողները իրենք շատ աւելի ամօթալի դաշինք կրեցին և պատճառ դառան չընկած Էդիրնէի և Սկիւտարի խայտառակ անկման։ Գատերազմն արդէն վերջացել է. յաղթող բալկանցիք այժմ պահանջում են պարտուած Օսմանցուց աւելի մեծ հատուցումներ համաձայն իրենց տերիտօրիալ նուաճումների և վերսկսած պատերազմի ծախսերի։

ՍՏԱՑՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) Հնչակ-№№ 1, 2 և 3, կամեցողները կարող են ստանալ մեր խմբագրութիւնից։

2) Կայծ №№ 7, 8, 9

3) Կոչ ուղղուած Եւրոպական մեծ պետութիւններին և ժողովրդներին. հրատ. Ս. Դեմ. Հնչ. կուսակցութեան, տպարան Հնչակի, Փարիզ 1913 թ. գինն է 25 սանտիմ։

4) Արևելեան պարեբերաժշտական հեղինակութիւն Ս. Բարխուդարեանի Մոսկվա։

5) Հանդէս Ամսօրեայ № 3. 6) Բողոջ №№ 1-4։

7) Կայծ, թիւ 10—11 (Ապրիլ—Մայիս) նուիրուած Կարլ Մարքսի յիշատակին, պատկերազարդ է։ Մէջն ունի նաև Հնչ. կուսակցութեան Վետերանների—Նազարբէգի, Սապահ Գիւլեանի և Սասնոյ հերոս Մուրադի-նկարները։

8) Գիւղատնտես №№1, 2 3 և 4 ընտիր և միակ լուրջ գիւղատն. հանդէսը մեր մէջ պատկերազարդ է և մասնակցում են մասնագէտ գիւղատնտեսներ։

9) Պատանի-գիրք VI, բարեփոխուած ձևով։

Խմբագիր-հրատարակիչ

Ա. Տ. Վարդանեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱԳԱԶԻՆ „ՀՕՆ-ՄԱՐԳԷ“

ԱԻԱԳ ԽԱՆ ԱՖԹԱՆԴԻԼԵԱՆԻ

Հիմնուած 1897 թ.

Կանացի ճաշակաւոր փէշեր, ամեն գոյնի շալ դերեացուներ, մետաքսէ կտորներ, գունաւոր բաթիստներ, պիքէներ, չիթ և աղաբանի։ Շիրլացուներ, հաշիաներ, բազմատեսակ լէնթեր և մախմուռ բաֆթաներ։

Տղամարդկանց և կանացի ճաշակաւոր կոստիւմացուներ։

Թարմ շոկոլատ և կակաօ, բազմատեսակ կոնֆէթներ, մուրաբաներ, և պիշէնիներ։

Ռուսական և Տաճկական ամեն տեսակի պապիրոսներ և ընտիր սիգարներ Լիմոնի և նարնջի և նռան ջրեր։

Թարմ կոնսէրվներ և եւրոպական ամեն տեսակի խմիչքներ, կալպասներ և Ռուսական թարմ պանիր։ Եւայլն և այլն։

Արժէքները մրցութիւնից դուրս են։ Մեր մշտական յաճախորդներին տալիս ենք 5% զեղչ։

ԼԻԼԱՒԱ ԹԱՂՈՒՄ

Փնտռուում է մի գոմ, որ ունենայ 4—5 ձի կապելու յարմարութիւն։ Գոմը լինելու է օդասուն, մաքուր և բարձր։ Դիմել պ. Վաղարշակ Զաքարեանին

ՍՏԱՑԵԼԵՆՔ ԳԻՒՂԱՏՆՏԵՍ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԹԵՐԹԻ

№№ 1, 2, 3 և 4

Գործակալ Թաւրիզի Լ. Տատեան